

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 09 » նոյեմբեր 2022թ. No 5227 - Լ

ՄԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԵՈՂ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, մայրական և վերարտադրողական առողջության բարելավմանն ուղղված հիմնախնդիրները, նպատակները և առաջիկա 5 տարվա գործողությունների պլանը սահմանելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) մայրական և վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մայրական և վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարության 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ սույն հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

3. Սույն հրամանի հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Զումայանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐԱԿԱՆ և ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

Նախորդ ռազմավարության կատարման գնահատում

1. ՀՀ կառավարության կողմից 2016 թվականի հունիսի 23-ի N24 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Վերարտադրողական առողջության բարելավման ծրագիրը և 2016-2021թթ. գործողությունների ծրագիրը», որտեղ նախատեսվել էին առաջիկա 5 տարիների ընթացքում ոլորտի զարգացման ուղենիշներ և գերակա ուղղությունները: Ռազմավարության շրջանակներում մեկնարկեցին մի շարք ծրագրեր, որոնք ինչպես այսօր, այնպես էլ առաջիկա տարիներին կարևոր դերակատարում կունենան երկրի ժողովրդագրական իրավիճակի բարելավման տեսանկյունից: Մասնավորապես,

1) Կառավարության կողմից հաստատվել է «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման ծրագիրը», որի շրջանակներում իրականացվում են միջոցառումներ՝ ուղղված դեռահասների վերարտադրողական առողջության բարելավմանը, ռիսկի խմբի հղիների ախտորոշիչ հնարավորությունների ընդլայնմանը, պերինատալ կորուստների, այդ թվում ինքնաբեր վիժումները, պտղի ներագանդային մահվան դեպքերի նվազեցմանը, անպտղության հաղթահարմանը:

2) Մեկնարկել և տարեց տարի ընդլայնվում է վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ անպտուղ զույգերի բուժման ծրագիրը, որի շրջանակներում շահառուների 6 խումբ ստանում են բուժում՝ պետական պատվերի շրջանակներում:

3) Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Մարդու վերարտադրողական առողջության

և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի կիրառման արդյունքում ակնկալվում է՝ անպտղությամբ տառապող ընտանիքների, անձանց՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման հնարավորությունների ընդլայնում, արհեստական սերմնավորման ծառայությունների զարգացման հնարավորությունների մեծացում, այդ թվում մարզային մակարդակում, դոնորների և փոխնակ մայրերի ռեգիստրի ստեղծում և նրանց նկատմամբ սահմանված պահանջների պահպանման վերահսկելիության բարձրացում, երկրի ժողովրդագրական իրավիճակի բարելավում:

4) Կառավարության կողմից հաստատվել են «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքից բխող՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կանոնակարգող մի շարք ենթաօրենսդրական ակտեր:

5) ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատվել են մանկաբարձագինեկոլոգիական ծառայության 39 ուղեցույց, որոնք տեղադրվել են բջջային հեռախոսի հավելվածում՝ AAOG guidelines հղումով՝ բուժօգնություն իրականացնողների շրջանում դրանց կիրառելիությանունը և հասանելիությունը ապահովելու նպատակով:

6) Սկսվել և ընթանում են բժշկական փաստաթղթերի, հաշվառման և հաշվետվական ձևերի վերանայման աշխատանքները՝ դրանց հետագա թվայնացման և էլեկտրոնային առողջապահության համակարգում կիրառելիությունը ապահովելու նպատակով:

7) Գնահատվել են ծննդօգնության հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների ենթակառուցվածքները, կադրային, սարքավորումային հագեցվածությունը, կարողություններն ու հնարավորությունները, որի արդյունքում վերանայվել են ծննդօգնության բժշկական կազմակերպման մակարդակները,

դադարեցվել են չափանիշներին չհամապատասխանող ծննդօգնություն իրականացնող մի շարք բաժանմունքների գործունեությունը:

8) Վերջին տարիներին իրականացվել են մի շարք ծրագրային աշխատանքներ, ներդրվել է պրենատալ կոնսիլիումների համակարգը, վերանայվել և կանոնակարգվել է բարձր ռիսկի խմբի հղիների ուղեգրման համակարգը, հստակեցվել ուղեգրման մեխանիզմները, ներդրվել մորից երեխային փոխանցվող հեպատիտ B-ի դեմ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացակարգը, մահացած ծնված պտղի և մահացած նորածնի արյան նմուշառման ընթացակարգ՝ հետազայում ԴՆԹ նույնականացման հնարավորություն ստեղծելու համար, կանոնակարգվել է ծննդաբերության ընթացքում աջակցող միջավայրի կազմակերպման խնդիրը, մեծածավալ աշխատանք է իրականացվել պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների դեմ պայքարի ուղղությամբ՝ թե օրենսդրական կարգավորումների, թե բժշկական անձնակազմի և հանրության իրազեկման առումով:

9) Արդյունքում որոշակիորեն բարելավվել են վերարտադրողական առողջության ցուցանիշները, 2016-2020թթ. ընթացքում արձանագրվել է նախածննդյան և ծննդաբերությունների ստացիոնարում համատարած ընդգրկվածություն, պերինատալ մահացության իջեցում 4 պրոմիլային կետով, 2015թ. համեմատությամբ ինքնաբեր վիժումների կրճատում շուրջ 30%-ով: Ըստ Հայաստանի Ժողովրդագրական առողջապահության հետազոտության (ՀԺԱՀ) 2016թ. տվյալների, հետազոտությանը նախորդող 3 տարիների բոլոր հղիությունների 22,6%-ը ավարտվել է աբորտով, մինչդեռ համաձայն 2021թ. կատարված՝ Հայաստանում անպտղության տարածվածության հետազոտության՝ արհեստական ընդհատմամբ է ավարտվել հղիությունների 14,4%: Վերջին 6 տարիների ընթացքում ծնունդների թվի նվազման ֆոնի վրա 2020թ. առաջին անգամ գրանցվել է ծնունդների աճ՝ 211-ով:

2. Հաշվի առնելով նախորդ ռազմավարության նշանակությունը՝ ոլորտի բացերի, կարիքների բացահայտման և անհրաժեշտ գործողությունների ամրագրման և այնուհետև դրանց իրականացման հարցում, գնահատելով նախորդ

ռազմավարության շրջանակներում ունեցած ձեռքբերումները և թերացումները, ինչպես նաև վերջին տարիներին ի հայտ եկած նոր մարտահրավերները, անհրաժեշտություն է առաջացել մշակել մայրական և վերարտադրողական առողջության բարելավման նոր ռազմավարություն (այսուհետ, Ռազմավարություն) և վերջինիս իրականացման գործողությունների 2022-2026թթ. ծրագիր:

Իրավիճակի վերլուծություն և բացահայտված հիմնախնդիրներ

3. Չնայած նախորդ տարիներին ոլորտում մայրական և վերարտադրողական առողջության ոլորտում արձանագրած ձեռքբերումներին, այնուամենայնիվ դրանց հետ զուգահեռ՝ կան բազմաթիվ խնդիրներ և մարտահրավերներ, որոնք իրենց լուծումը պետք է ստանան սույն ռազմավարությամբ սահմանված միջացողումների շրջանակներում՝ առաջիկա տարիներին:

4. Ճգնաժամային է մնում երկրում առկա ժողովրդագրական իրավիճակը, որը էլ ավելի է վատթարացել 2020թ.-ին՝ կորոնավիրուսային համավարակի և 44-օրյան պատերազմի հետևանքով: Մասնավորապես, պտղաբերության ցածր(1.6), անգամ պարզ վերարտադրություն չապահովող մակարդակը, անպտղության գրեթե ճգնաժամային մակարդակը (14,9) հանգեցրել են երջին տարիներին ծնունդների թվի կրճատմանը, ինչն անդրադարձել է նաև բնական հավելաճին, որը 2020թ. նվազել է մինչև կրիտիկական ցուցանիշ, կազմելով ընդամենը 0,4: Ավելին, ծնունդների աճը, որը գրանցվել էր 2020թ. վերջին և 2021թ. առաջին կիսամյակում, հուլիս ամսից սկսեց կտրուկ նվազել: Վերջինիս ամենահավանական պատճառներից մեկը կարող էր լինել պատերազմի և հետպատերազմյան մի քանի ամիսների ամիսների ընթացքում ամուսնությունների, հետևաբար, նաև առաջնահղիների գրեթե բացակայությունը:

5. Այս իրավիճակում, չնայած առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման ծրագրի շրջանակներում կառավարության կողմից նախաձեռնած կարևորագույն միջոցառումներին, վերարտադրողական բժշկության հետագա զարգացումը պետք է դիտարկվի որպես ռազմավարական նշանակության գերակայություն:

6. Դեռևս շարունակում է բարձր մնալ մայրական մահացության եռամյա ցուցանիշը, որը վերջին տարիներին ոչ միայն չի ապահովել նախորդ ռազմավարությամբ ամրագրված ցուցանիշը, այլև աճի միտում է դրսևորել (2020թ.՝ 24,8): Եվ չնայած մայրական մահացության կառուցվածքում գերակշռում են մայրական մահվան անուղղակի պատճառներով պայմանավորված մահերը՝ էքստրագենիտալ ծանր ախտաբանություններ, այդ թվում 2020-2021թթ.՝ կորոնավիրուսային վարակով պայմանավորված, այնուամենայնիվ դեռևս առկա են կանխարգելիչ պատճառներից մայրական մահվան դեպքեր (մանկաբարձական արյունահոսությունները, հիպերտենզիվ խանգարումները պրեէկլամպսիա, էկլամպսիա, հետծննդյան թարախասեպտիկ բարդությունները), որոնք հնարավոր էր կանխարգելել՝ անհետաձգելի բժշկական օգնության կազմակերպման և իրականացման, ախտաբանությունների վաղ ախտորոշման ու ուղեգրման, ինչպես նաև էքստրագենիտալ ախտաբանությունների հայտնաբերման, ուղեցույցների կիրառելիությունը բարձրացման միջոցով:

7. Կանոնակարգման և բարելավման կարիք ունեն հղիներին, ծննդկաններին տրամադրվող արագ արձագանքման անհետաձգելի ծառայությունները, շարունակում է արդիական մնալ մայրական և վերարտադրողական առողջության ոլորտում տրամադրվող բուժօգնության որակի չափանիշների մշակման, ներդրման և բուժաշխատողների կողմից ախտորոշիչ միջոցների, տեխնոլոգիաների, ինչպես նաև բուժման և կանխարգելման նորագույն մոտեցումների կիրառման անհրաժեշտության հարցը:

8. Որպես ընտանիքի պլանավորման մեթոդ դեռևս շարունակում է բարձր մնալ հղիության արհեստական ընդհատման մակարդակը, ինչը ուղեկցվում է վերարտադրողական առողջության համար իրական սպառնալիքներով: Պտղի սեռով պայմանավորված սեռերի անհամամասնության գործակիցը, չնայած վերջին տարիներին զգալի բարելավման, դեռևս նվազեցման կարիք ունի (2021թ. հունվար-դեկտեմբերին կենդանի ծնվածների շրջանում այն կազմել է 108,8 տղա՝ 100 աղջկա

հաշվով):

9. Ընտանիքի առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունները և մատչելիությունը սահմանափակ են, հատկապես բնակչության սոցիալապես անապահով, հատուկ կարիքներով և սահմանափակ հնարավորություններով խմբերի անձանց, դեռահասների համար: Դեռևս լիարժեք չեն ընտանեկան բռնության, սեռական ոտնձգությունների և մարդկային թրաֆիքինգի հետևանքների ամբողջական գնահատմանը, կանխարգելմանն ու ուղղորդմանն ուղղված համապարփակ ծրագրերը:

10. Շարունակում է խնդիր մնակ անպտղության, հղիության կրելախախտի, վաղաժամ ծննդաբերությունների բարձր մակարդակը:

11. Չնայած արդեն իսկ օրենսդրորեն ամրագրվել է 16-18 տարեկան դեռահասի՝ բժշկական միջամտության համար համաձայնություն տալու և իր առողջության մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը, դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում գիտելիքներ և մեկուսի և բարյացակամ պայմաններում ծառայություններ ստանալու մեխանիզմները ամենուր ապահովված չեն:

12. Շարունակում է օրակարգային խնդիր մնալ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունները կանոնակարգող օրենսդրական, նորմատիվային դաշտի կատարելագործման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման խնդիրը, ինչպես նաև նշված ծառայությունների աշխարհագրական մատչելիության հարցը, քանի որ, բացառությամբ Երևանի, հանրապետության այլ շրջաններում գործնականում բացակայում են վերարտադրողական բժշկությամբ զբաղվող կենտրոններ (կաբինետներ)՝ համապատասխան մասնագիտական ներուժով և հագեցվածությամբ:

12. Բավարար չէ արտակարգ իրավիճակներում ծննդօգնություն մատուցող բժշկական կազմակերպությունների պատրաստվածության մակարդակը, բացակայում են բնական և տեխնածին աղետների ժամանակ գործողությունների կազմակերպման

օրինակելի գործելակարգը՝ ծննդօգնություն և նորածինների խնամք իրականացնող կազմակերպությունների համար, ներառյալ տեսակավորումը և էվակուացիոն պլանը:

13. Սեռական օրգանների քաղցկեղը և կրծքագեղձի քաղցկեղը ձեռք են բերել մեծ մասշտաբայնություն, հատկապես բարձիթող դեպքերի բարձրացման միտումը դարձնում է դրանց վաղ կանխարգելումն ու նվազեցումը լուրջ բժշկական և սոցիալական հիմնախնդիր:

Ռազմավարության նպատակները, իրականացման ուղիները, գնահատման ցուցիչները

14. Մայրական և վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարության նպատակներն են՝ բնակչության վերարտադրողական առողջության բարելավումը, հղիների հսկողության և ծննդօգնության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, մայրական մահացության, պերինատալ կորուստների կրճատումը, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների հասանելությունը:

15. Ռազմավարության իրականացման ուղիներն ու առաջարկվող լուծումներն են՝

- 1) Ուղղություն 1. Մայրական և վերարտադրողական առողջության ոլորտի նորմատիվային բազայի կատարելագործում:
- 2) Ուղղություն 2. Հաշվառման և հաշվետվական ձևերի վերանայում, էլեկտրոնային առողջապահության պահանջներին համապատասխանեցում:
- 3) Ուղղություն 3. Հղիների հսկողության, պրենատալ ախտորոշման և ծննդօգնության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարելավում, չափանիշների մշակում և ներդրում:
- 4) Ուղղություն 4. Մարդկային ներուժի զարգացում, շարունակական մասնագիտական կրթության ապահովում, գիտելիքների կիրառելիության ապահովում
- 5) Ուղղություն 5. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների մարզերում տարածման համար պայմանների ապահովում:

6) Ուղղություն 6.Արտակարգ իրավիճակներում վերարտադրողական առողջության ոլորտում ծառայություն մատուցող կազմակերպություններում պատրաստվածության բարձրացում, նվազագույն ծառայությունների փաթեթի ներդրում:

7) Ուղղություն 7.Վերարտադրողական և մայրական առողջության կարևոր հարցերի շուրջ հանրային իրազեկման աշխատանքների իրականացում:

8) Ուղղություն 8.Վերարտադրողական և մայրական առողջության իրավիճակային ուսումնասիրությունների իրականացում, կարևոր հիմնախնդիրների,պատճառների վերհանում և առաջարկների ներկայացում

9) Ուղղություն 9. Վերարտադրողական տարիքի կանանց սկրինինգային ծրագրերի ընդլայնում, արդյունավետության բարձրացում

16. Ռազմավարության շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ վերարտադրողական տարիքի կանայք,այդ թվում հաշմանդամություն ունեցող, զույգեր, դեռահասներ, վերարտադրողական ոլորտի ծառայություններ մատուցող բժշկական անձնակազմը, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, բժշկագիտության բնագավառի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, գիտահետազոտական ինստիտուտներ:

17. Ռազմավարության գնահատման ցուցիչներն են՝

1) Վերարտադրողական առողջության դաշտի բարելավմանն ու կանոնակարգմանն ուղղված կանոնակարգող օրենսդրական, նորմատիվային-իրավական ակտերը:

2) միջազգային մոտեցումներին համապատասխան վերարտադրողական առողջության ոլորտի հարցերին առնչվող ուղեցույցներ, գործելակարգեր:

3) Մարզերում գործող՝ վերարտադրողական աժանդակ տեխնոլոգիաներով բժշկական օգնություն և սպասարկում մատուցող բժշկական կազմակերպությունների (կենտրոնների, կաբինետների) առկայություն

4) Վիճակագրական բարելավված հետևյալ ցուցիչներ

ա) հղիների նախածննդյան հսկողության վաղ ընդգրկման (մինչև հղիության 12 շաբաթը) ցուցանիշ,

բ) Մայրական և պերինատալ մահացության ցուցանիշ

գ) առաջնային և երկրորդային անպտղության տարածվածության տոկոսային ցուցանիշ

դ) ինքնաբեր և բժշկական ցուցումներով հղիությունը ընդհատած կանանց տոկոսը՝ հղիությունն ավարտած կանանց նկատմամբ:

Ռազմավարության և գործողությունների ծրագրերի իրականացման

մշտադիտարկումը

18. Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների մշտադիտարկումը իրականացվելու է Առողջապահության նախարարության կողմից՝ պարբերաբար, որի արդյունքները ներկայացվելու են Առողջապահության նախարարի հրամանով ստեղծված՝ Առողջապահության նախարարին կից Մանկաբարձագինեկոլոգիական խորհրդի տարեվերջյան նիստերում: Ընթացիկ մշտադիտարկումը իրականացվելու է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի, բժշկական կազմակերպությունների կողմից՝ յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում:

19. Գործընթացի արտաքին մշտադիտարկման ու բարելավման հարցերում իրենց համաձայնությամբ կարևոր դերակատարություն կստանձնեն բժշկական մասնագիտական միավորումները (ասոցիացիաները) և միջազգային և տեղական ոչ պետական կազմակերպությունները:

20. Ռազմավարության ներդրումն ապահովող ֆինանսավորումն ակնկալվում է հետևյալ աղբյուրներից .

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե (ՀՀ պետական բյուջեից՝ առողջապահության նախարարությանը տրամադրվող միջոցների շրջանակներում),

2) Միջազգային կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում,

- 3) Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր կազմակերպությունների միջոցներ,
- 4) Հասարակական կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում,
- 5) Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ

Հավելված 2
Առողջապահության նախարարի
2022 թվականի նոյեմբեր « 09 » - ի թիվ 5227 - Լ հրամանի

ՄԱՅՐԱԿԱՆ և ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Համակատարող	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունք	Ակնկալվող ֆինանսական միջոցները	Վերստուգելի չափանիշ
1	2	3	4	5	6	7	8
	Ուղղություն 1. Վերարտադրողական առողջության ոլորտի նորմատիվային բազայի կատարելագործում:						
1.	1. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների լիցենզավորման պայմանների և պահանջների վերանայում և արդիականացում	ԱՆ լիցենզավորման գործակալություն	Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն Վերարտադրողական բժշկության հայկական ասոցիացիա	2022-2023թթ.	Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով ծառայություն մատուցող բժշկական կազմակերպություններին ներկայացվող պահանջները կհամապատասխանեցվեն աշխարհի զարգացած երկրներում ընդունված մոդելին, դրանով իսկ խթանելով Հայաստանում նշված ծառայությունների զարգացումը	Ֆինանսվորում չի պահանջում	ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

5.	«Հղիության դրական փորձի ձևավորման համար անտենատու խնամքի առաջարկները » ԱՀԿ-ի ուղեցույցի տեղայնացում և ներդրում	ԱՆ մոր և մանկան վարչություն	Մանկաբարձ-գինեկոլոգների հայկական ասոցիացիա ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ	2023-2024թթ.	Մայրական, Պերինատալ հիվանդացության և մահացության իջեցում, Հղիների անտենատալ հսկողության որակի բարձրացում	Օրենքով չարգելված աղբյուրներ	ՀՀ առողջության նախարարի հրաման
6.	Մայրության դպրոցների դասընթացների վերանայում/արդիականում, նախաձեռնության և հետձեռնության խնամքում հայրերի ներգրավման վերաբերյալ ՄԱԲՀ կողմից տեղայնացված ուղեցույցի ներդրում	ԱՆ մոր և մանկան վարչություն	Բժշկական կազմակերպություններ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ	2022-2026	Հղիների անտենատալ հսկողության որակի բարելավում, հոգեբանական աջակցության տրամադրում	Օրենքով չարգելված աղբյուրներ	ՀՀ առողջության նախարարի հրաման
8.	Ծննդօգնության իրականացնող բուժհաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման գործիքի մշակում, ներդրում	ԱՆ մոր և մանկան առողջության պահպանման վարչություն	Մանկաբարձ-գինեկոլոգների հայկական ասոցիացիա ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ	2024-2026	Բացահայտված են ծննդօգնության հաստատությունների կողմից մատուցվող որակյալ ծառայություններին խոչնդոտ հանդիսացող գործոնները	Օրենքով չարգելված աղբյուրներ	ՀՀ առողջության նախարարի հրաման
9.	Անվտանգ աբորտի և բարձրորակ բուժօգնության տրամադրման համար ԱՀԿ նոր մոտեցումների տեղայնացում	ԱՆ մոր և մանկան վարչություն	Մանկաբարձ-գինեկոլոգների հայկական ասոցիացիա	2023-2024թթ.	Նախա- և հետաբորտային շրջանի խորհրդատվության և հակաբեղմնավորիչներ	Օրենքով չարգելված աղբյուրներ	Հղիության արհեստակա ն ընդհատման ուղեցույցը

			ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ		ի նշանակման ծառայությունների բարելավում		տեղայնացված և հաստատված է
10.	Սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված կանանց հակաբեղմնավորիչ միջոցներով ապահովում	ԱՆ ֆինանսական վարչություն	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ	2023-2026թթ.	Անցանկալի հղիությունների, հղիության արհեստական ընդհատումների կանխարգելում	Պետական բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ	Հակաբեղմնավորիչները գնվել և հատկացվել են բժշկական կազմակերպություններին
Ուղղություն 4. Մարդկային ներուժի զարգացում, շարունակական մասնագիտական կրթության ապահովում, գիտելիքների կիրառելիության ապահովում							
11.	Մայրական և վերարտադրողական առողջության ոլորտի մասնագետների շարունակական ուսուցման ապահովում	ՀՀ ԱՆ ԱԱԻ	ԱՆ մոր և մանկա առողջության պահպանման վարչություն Մանկաբարձ-գինեկոլոգների Ասոցիացիա	2022-2026թթ.	Վերարտադրողական առողջության ոլորտի մասնագետների գիտելիքների, հմտությունների, խորհրդատվության մակարդակի բարելավում	Օրենքով չարգելված աղբյուրներ	ՀՀ ԱՆ հրամաններ
12.	Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով բժշկական օգնության և սպասարկում իրականացնող մասնագետների համար հետբուհական վերապատրաստման և վերաորակավորման կրթական ծրագրերի մշակում և ներդրում:	ՀՀ ԱՆ ԱԱԻ	Վերարտադրողական բժշկության հայկական ասոցիացիա	2022-2026թթ.	Գինեկոլոգները հնարավորություն կստանան վերապատրաստվել՝ ներարգանդային սերմնավորման ծառայություններ մատուցելու նպատակով, ինչպես	Պետական բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ	Վերապատրաստման և կլինիկական օրդինատուրայի կլինիկական Կրթական ծրագրերը մշակված են,

					նաև անցնել կլինիկական օրդինատորա՝ ռեպրոդուկտոլոգիա մասնագիտությամբ՝ արտամարմնային բեղմնավորման ծառայություններ մատուցելու համար:		կրթական գործընթացն իրականացվում է
13.	Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների, տարբեր խմբերի անձանց առաձնահատկությունների և վերարտադրողական առողջության մատչելիության կարիքների, նրանց հետ շփման և հաղորդակցման հմտությունների և էթիկայի, հաշմանդամության ճիշտ և սխալ տերմինաբանության, վերաբերյալ կրթական մոդուլի մշակում և ներդրում հետբուհական վերապատրաստման դասընթացներում	ՀՀ ԱՆ ԱԱԻ	Հասարակական կազմակերպություններ	2022թ և շարունակական	Վերարտադրողական առողջության տարբեր ոլորտների մասնագետների կարողությունների բարելավում՝ հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի կանանց որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով:	ՀՀ պետական բյուջե	Կրթական մոդուլը ներառված է մանկաբարձ-գինեկոլոգների և վերարտադրողաբանների վերապատրաստումների ծրագրում
14.	Բռնության ենթարկված կանանց առողջապահական կարիքների, նրանց հետ շփման և հաղորդակցման հմտությունների և էթիկայի, ինչպես նաև նրանց ուղղորդման	ՀՀ ԱՆ ԱԱԻ	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ		Վերարտադրողական առողջության տարբեր ոլորտների մասնագետների կարողությունների բարելավում՝	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված միջոցներ	Կրթական մոդուլը ներառված է մանկաբարձ-գինեկոլոգների և

	վերաբերյալ կրթական մոդուլի մշակում և ներդրում հետբուհական վերապատրաստման դասընթացներում				բռնության ենթարկված կանանց որակյալ ծառայություններ մատուցելու և ուղղորդելու նպատակով:		վերարտադրողաբանների վերապատրաստումների ծրագրում
Ուղղություն 6. Արտակարգ իրավիճակներում վերարտադրողական առողջության ոլորտում ծառայություն մատուցող կազմակերպություններում պատրաստվածության բարձրացում, նվազագույն ծառայությունների փաթեթի ներդրում:							
15.	Ծննդոգնություն իրականացնող կազմակերպությունների համար պացիենտների (ներառյալ նորածինների) տեսակավորման և էվակուացիայի օրինակելի ուղեցույցի մշակում	ԱՆ մոր և մանկան վարչություն	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ	2023-2024թթ.	Ծննդոգնություն իրականացնող կազմակերպություններին միջազգային լավագույն փորձի վրա հիմնված օրինակելի գործելալարգի տրամադրում՝ տվյալ կազմակերպության շենքային պայմաններից և այլ հանգամանքներից ելնելով՝ սեփական գործողությունների պլանի մշակման համար	Օրենքով չարգելված աղբյուրներ	Պացիենտներ ի (ներառյալ նորածինների) տեսակավորման և էվակուացիայի օրինակելի ուղեցույցը տրամադրված է ծննդոգնություն իրականացնող կազմակերպություններին
11.	Ծննդոգնության հիմնարկների բուժանձնակազմի վերապատրաստում՝ աղետների ժամանակ վերարտադրողական առողջության ծառայությունների	Մանկաբարձ-գինեկոլոգների հայկական ասոցիացիա	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ	2023-2026թթ.	Արտակարգ իրավիճակների ժամանակ ծննդոգնություն իրականացնող կազմակերպություններ	Օրենքով չարգելված աղբյուրներ	Ծննդոգնություն մատուցող կազմակերպությունների անձնակազմի վերապատրաստում

	տրամադրման առանձնահատկությունների վերաբերյալ				պատրաստվածության բարձրացում		է՝ արտակարգ իրավիճակների պայմաններում ծառայություններ տրամադրելու վերաբերյալ
	Ուղղություն 7.Վերարտադրողական և մայրական առողջության կարևոր հարցերի շուրջ հանրային իրազեկման աշխատանքների իրականացում:						
12.	Բնակչության իրազեկվածության բարձրացում մայրական և վերարտադրողական առողջության արդիական հարցերի շուրջ, ներառյալ նախածննդյան և հետծննդյան խնամքում հայրերի ներգրավվածության օգուտների վերաբերյալ	ԱՆ մոր և մանկան վարչություն	Տեղական և միջազգային կազմակերպություններ	2022թ.	Մայրական և վերարտադրողական առողջության բարելավում, կանխարգելիչ ախտաբանությունների իջեցում	Օրենքով չարգելված աղբյուրներ	Իրազեկման նյութերի մշակում և տարածում, հայրերի համար դասընթացների կազմակերպում
13.	Լսողության, տեսողության և մտավոր և զարգացման խնդիրներ ունեցող կանանց համար վերարտադրողական առողջությանն առնչվող մատչելի ուղեցույցների և տեսանյութերի մշակում	ԱՆ մոր և մանկան առողջության պահպանման վարչություն	Տեղային և միջազգային հասարակական կազմակերպություններ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ	2023-2026թթ.	հաշմանդամություն ունեցող կանանց և աղքիկների վերարտադրողական առողջությանն առնչվող հիմնարար գիտելիքների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում, իրազեկվածության բարձրացում	Օրենքով չարգելված աղբյուրներ	հաշմանդամություն ունեցող կանանց համար մշակված իրազեկման նյութերը

	Ուղղություն 8.Վերարտադրողական և մայրական առողջության իրավիճակային ուսմնասիրությունների իրականացում, կարևոր հիմնախնդիրների,պատճառների վերհանում և առաջարկների ներկայացում						
14.	Մայրական մահացության և մեռելածնության պատճառների վերլուծություն, աուդիտի իրականացում	ԱՆ մոր և մանկան առողջության պահպանման վարչություն	Մանկաբարձ-գինեկոլոգների ասոցիացիա ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ,	2023-2024թ.	Մայրական և մահացության և մեռելածնության իրական պատճառները բացահայտված են և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում	Օրենքով չարգելված աղբյուրներ	Աուդիտի զեկույցը՝ առաջարկներով, ներկայացվել է առողջապահության նախարարին
15.	Հայաստանում կեսարյան հատումների պատճառական կառուցվածքի ուսումնասիրություն, առաջարկների ներկայացում	ԱՆ մոր և մանկան առողջության պահպանման վարչություն	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ	2022-2023թ.	Կեսարյան հատումների աճի կանխարգելմանն ուղղված ծրագրի մշակման համար հիմնախնդիրների բացահայտում	Օրենքով չարգելված աղբյուրներ	Հետազոտության զեկույց
	Ուղղություն 9. Վերարտադրողական տարիքի կանանց սկրինինգային ծրագրերի ընդլայնում, արդյունավետության բարձրացում						
16.	Արգանդի վզիկի և կրծքագեղծերի քաղցկեղի կանխարգելման ծառայությունների ընդլայնում, կատարողականի բարձրացում	ԱՆ ԾԻԳ,ՊԱԳ, մոմանկան վարչություն	ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան	2022-2026թ.	Ախտաբանությունների վաղ հայտնաբերում, բուժում	Օրենքով չարգելված աղբյուրներ	Կանանց 50% ենթարկված են սկրինինգի